



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 28 ՅՈՒՆԻՍ, 2021

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ ՊԱՐԳԵՒԱԾ ՈՒՐԱԽՈՒԹԻԻՆԸ

Ճնորհք ըրէ ինձի՝ քու ծառայիդ,
որպէսվի ապրիմ եւ խօսքերդ գործադրեմ:
Բաց աչքերս, որպէսվի տեսնեմ
Օրէնքիդ հրաշալիքները:
Ես պանդուխտ եմ երկրի վրայ,
պատուէրների մի՝ ծածկեր ինձմէ:
Սիրտս կ'այրի տեւաբար
օրէնքներուդ ըղձալով:
Դուն կը սաստես անիծեալ ամբարտաւանները,
որոնք շեղած են պատուրներիդ:
Ինձմէ հեռու պահէ անոնց նախապիւնքն
ու արհամարհանքը,
որովհետեւ ես պատուիրաններիդ կը գործադրեմ:
Թէպէտ իշխողները ինձի դէմ դաւ կը նիւթեն ու կը չարախօսեն,
բայց ես՝ քու ծառադ՝ կանոններուդ մասին կը մտածեմ:
Արդարեւ պատուիրաններիդ են իմ բերկրանքս,
անոնք են իմ խորհրդականներս:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնայ ի ցանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺԹԸ



ԱՌԱԿԱՑ 11 ԳԼՈՒԽ

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԹԱՄՏՈՒԹԻՒՆ 11:16-31

Շարունակելով իմաստուն խօսքերը, որոնք լոյս են ու ճրագ, որպէս Աստուծոյ խօսքը, իւրաքանչիւր մարդ արարածի համար, նախքան մեկնումը այս աշխարհէն, ու այդ իմաստուն խօսքերուն արդիւնքը ու պտուղը անոր որ կը հեպտի այդ խօսքերուն ու կը գործադրէ զանոնք, այնպէս ինչպէս պիտի ըսէր Քրիստոս. «Ով որ իմ այս խօսքերս կը լսէ ու կը գործադրէ, կը նմանի այն մարդուն որ իր փունը ժայռի վրայ կը կառուցէ»: Ուրեմն կը նշանակէ Իմաստուն այս խօսքերը ոչ միայն լսելու այլ նաեւ գործադրելու պայմանով, որպէսզի նաեւ անոնց արդիւնքը փեսնենք: Ահա համեմատական մըն է որ կընէ, ըսելով. «Այնպէս ինչպէս զօրաւոր մարդիկ հարստութիւն կը ստանան, նոյնպէս շնորհալի կիներ պատրի», կը նշանակէ, հարստութիւն մըն է այդ արժանապատուութիւն կոչուածը որուն համար զօրաւոր պէտք է ըլլալ նկարագրով, ինչպէս որ հարստութիւն ունենալու համար զօրաւոր ըլլալու, որպէսզի կարենանք ոչ միայն ունենալու այլ նաեւ պահելու զայն:

17-րդ համար կու գայ ըսելու, թէ իւրաքանչիւր անձ իր անձին նկատմամբ բարեկամ է կամ թշնամի: Յաճախ մենք մեր անձէն դուրս կ'ուզենք փեսնել ու փնտրել մեր բարեկամներն ու մեր թշնամիները, բայց խորքին մէջ մենք մեր անձերուն բարեկամներն ենք կամ թշնամիները: «Ողորմած մարդը իր անձին աղէկութիւն կընէ, մինչ անողորմը իր մարմնին նեղութիւն կու տայ»: Կը նշանակէ, եթէ ողորմութեամբ վերաբերուիմ ուրիշին հետ, այն գիտակցութեամբ որ ես ալ ողորմութիւն գրած եմ նոյն ինքն Աստուծմէ, ահա այն պէս ողորմութիւն կը գրնենմ նաեւ աւարտին, իսկ անոր հակառակ նեղութիւն պիտի գրնենմ:

Նոյնպէս ալ 18-րդ համար, ի միջի այլոց այս բացատրութիւնները, որքան ալ ժամանակաւոր այս կեանքին համար են, բայց նաեւ մեզ կը պարտաստեն յաւիտենականին: Չար մարդուն գործերը սնտրի են, այսինքն պարասպ, որ կը նշանակէ անոր գործերը արդիւնք մը չունին, արդիւնքը այս պարագային ոչ նիւթական արդիւնքի մասին, այլ գալթին համար արդէտք իմ աշխատանքիս արդիւնքը ինչպիսին է: Ահա թէ ինչու արդարութիւն ցանողը անպայմանօրէն ապահով վարձք պիտի ունենայ: Ահա 19-րդ համար կու գայ աւելի յստակ դարձնելու միտքը երբ կընէ. «Արդարութիւնը կեանքի կ'առաջնորդէ, մինչ չարութեան հետեւողը մահուան»: Այո երկուքի պարագային սովորական մահը պիտի ու կրնան ճաշակել, բայց միշտ յիշենք որ Աստուծաշունչ Մարտանը երբ կը խօսի մահուան մասին, միշտ ի մտի ունի յաւիտենական մահը կամ յաւիտենական կեանքը, որովհետեւ եթէ երբեք միայն այս կեանքին մասին ըլլար խօսքը, ապա Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Եթէ այս կեանքին վրայ յոյս դրած ենք, ամենախղճալին ենք»:

20-րդ համարը յստակ բացատրութիւն մը կու տայ ըսելով. «Ծուռ սիրտ ունեցողները Տիրոջ առջեւ պիտի են, բայց ուղիղ ճամբայ քալողները անոր հաճելի են»: Հետաքրքրական է, որ Աստուծաշունչ Մարտանը երբ սիրտ կընէ ի մտի ունի մարդուս խորհուրդները, միտքը, մտածումները: Քրիստոս առիթով մը պիտի ըսէր. «Ուր որ ձեր գանձն է, հոն է նաեւ ձեր սիրտը», այսինքն ձեր մտածումները: Ահա թէ Առակաց գիրքն ալ կու գայ յիշեցնելու եւ ըսելու, որ ծուռ մտածումներ, ծուռ խորհուրդները ունեցողը Աստուծոյ քով պիտի չէ, իսկ ուղիղ ճամբու մէջ քալողը Աստուծոյ հաճելի: 21-րդ համարը կը յիշեցնէ, «որ անօրէնները ինչպիսին ալ ըլլան, աւարտին անպատիժ պիտի չման» անպայմանօրէն պիտի ստանան իրենց պատիժը: Իսկ արդարներու պարագային ալ սերունդէ սերունդ պիտի ազատին գալիք պատուհասէն:

22-րդ համարը յիշեցում մըն է, ուր կը ներկայացնէ թէ կնոջ գեղեցկութիւնը ինչ բանի մէջ կը կայանայ, ոչ արարածին, այլ՝ անոր իմաստութեան եւ խոհեմութեան մէջ: Այլապէս այդ գեղեցկութիւնը կը նմանցնէ խոզին քիթին դրուած ոսկի օղակ: Իսկ 23-րդ համարը կընէ. «Արդարներուն սպասումն ու ակնկալութիւնը, եւ անօրէններուն սպասումն ու ակնկալութիւնը»: Արդարներուն պարագային բարութեան ցանկութիւնն թ որ ունին, որ կը նշանակէ զԱստուծոյ ունենալու, Աստուծոյ հետ ըլլալու ցանկութիւնը, որովհետեւ բարութիւն ըսելով կը հասկնանք Աստուծոյ, ինչպէս պիտի ըսէ Քրիստոս մեծահարուստ երիտասարդին, Աստուծոյ միայն բարին է: Իսկ անօրէններու պարագային իրենց ակնկալութիւնը Աստուծոյ բարկութիւնը պիտի ըլլայ:

24-րդ համարը կը սորվեցնէ փառու մասին, մանաւանդ փառ այնպիսի եղանակով որ այդ փրուածը Աստուծոյ կողմէ փրուած է բաշխելու համար, երկրորդ՝ վստահութիւնը ունենալու որ փառէ յետոյ ալ Աստուծոյ աւելիով պիտի տայ: Իսկ խնայելու պարագային, այնքան խնայէ, որ կարօտութեան մարմնուի, որ կը նշանակէ կը խնայէ այնպէս մը, որ յոյսը չունի որ Աստուծոյ կը հոգայ ու պիտի հոգայ մեր պէտքերը: Նոյն արտայայտութիւնը 28-րդ համարն է. «Հարստութեան վրայ յոյս դնողը պիտի իյնայ, բայց արդարները կանաչ փերտի պէս պիտի ծաղկին»: Ի վերջոյ, 31-րդ համար կընէ. «Եթէ արդարը երկրի վրայ պատիժ կընէ, ո՞ր կը մնան ամբարիշտն ու մեղաւորը»: Մտածելու առիթ կու տայ մեզմէ իւրաքանչիւրին, որ եթէ արդարները, որոնք երկրի վրայ պատիժ կընեն, որ այս պարագային իրենց համար պատիժ չէ, այնքան որքան առիթ աւելի պատրաստուելու, որքան առաւել մեղաւորը Աստուծոյ արդար դատաստանին: